

կէս պաշտօնական կերպով խնդրելով նաեւ մի-  
ջամտութիւնը հայ ծագումով բարձրաստիճան  
պաշտօնատարներու, որոնք կը գտնուէին ըլ-  
լայ թուրքերուն, ըլլայ ուսական ծառայու-  
թեան մէջ: Բայց երբ 1856-ի Փարիզի դաշնա-  
գրով Իշխանապետութիւնը ինքը կոչուեցաւ  
ցոյց տալու այն բարենորոգումները զորս ինքը  
օգտակար կը նկատէր իրեն համար, Պըլբըլու  
այն ատեն իր դիմումները ուղղեց Իշխանապե-  
տութեանց Մասնաւոր Դիւանին (Divanul-ad-  
hoc) :

«Ան ապահովեց հանդէպ հայոց դատին  
ամենաջերմ համակրութիւնը ժողովին անդամ-  
ներուն մէջէն կիրթ եւ օտար դաւանանքի քրիս-  
տոնեաներու դէմ որեւէ նախապաշարումէ  
զերծ անձերու, որոնցմէ ոմանք նոյնիսկ իր  
զպրօցի ընկերներէն: Նշանաւոր են որքան  
պերճախօս նոյնքան փաստացի ճառերը Միհայլ  
Քօկըլնիչիանուի եւ Քօսթաքի Նէկրիի, որոնք  
Մոլտովէններուն հետ համահաւասար իրա-  
ւունք կը պահանջէին հայերուն համար, եւ  
առհասարակ այն բոլոր քրիստոնեաներուն, ո-  
րոնք որեւէ օտար պաշտպանութեան տակ չէ-  
ին: Վիճարանութիւնը, ընդհանրապէս նպաս-  
տաւոր հայոց դատին, որ տեւեց երկու ամբողջ  
օր, վերջացաւ 1857 Նոյեմբեր 14-ի բանաձե-  
ւով, որուն համաձայն, Մասնաւոր Դիւանը,  
35-ի դէմ 39 ձայնով, խնդրին կարգադրութիւ-  
նը կը յետաձգէր, զայն նկատելով Օրէնսդիր  
Ժողովին ձեռնհասութեան սահմանին մէջ:

«Երկու Իշխանապետութեանց Դիւաննե-  
րուն որոշումները, որոնք կոչուած էին ծառա-  
յելու իբր հիմ Իշխանապետութեանց վերջնա-  
կան կազմակերպութեան, հաղորդուեցան Փա-  
րիզի դաշնագիրը ստորագրող պետութեանց  
ներկայացուցիչներուն, որոնք խորհրդաժողո-  
վի հաւաքուած էին Ֆրանսայի մայրաքաղաքին  
մէջ: Յակոբ Պըլբըլու Փարիզ մեկնեցաւ ան-  
միջապէս նոյն պետութեանց ներկայացուցիչ-  
ներուն յանձնելու, կէս պաշտօնական կերպով  
եւ իրեն սեփական միջոցներով, հայոց վիճա-  
կին եւ ցանկութեանց մասին յիշատակագիր  
մը:

«1858 Օգոստոս 7-19-ին խորհրդաժողովը  
կնքեց պայմանագրութիւն մը Մոլտովիոյ եւ  
Վալաքիոյ Միացեալ-Իշխանապետութեանց

կազմակերպութեան սկզբունքներուն մասին:  
Սոյն սկզբունքներու կարգին, հետեւեալ տրա-  
մադրութիւնը դրուած է 46-րդ յօդուածին  
մէջ.— Որեւէ քրիստոնեայ դաւանանքի Մոլտո-  
վացիներն ու Վալաքիացիները պիտի վայելեն  
քաղաքական իրաւունքներու հաւասարութիւն:

«Այս տրամադրութեամբ վերջ կը արուէր  
այն անընձական վիճակին, որմէ կը տառա-  
պէին Իշխանապետութեան հայերը երկար աւ-  
րինեքէ ի վեր: Անկէ յետոյ եւ առանց որեւէ  
վերապահութեան անոնք ընդունուեցան տե-  
ղացիներու մեծ ընտանիքին մէջ, լքելով հայ  
զարուք եւ հայ ազգ մակդիրները, որոնք անի-  
մաստ դարձած էին եւ որդեգրելով նոր տխու-  
րաս մը, որ միայն կը վայելէր իրենց նոր վի-  
ճակին, այն է ուսմէններ հայ կրօնքով»:

**ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍՆԵՐ**

Ազնուականութեան տիտղոսները, որոնք  
Ֆէնէրցիներու տիրապետութեան օրով կը զը-  
լացուէին հայերուն՝ դարձեալ սկսան տրուել  
ԺԹ. դարու առաջին քառորդին մէջ:

Առաջին անգամ Պօկտան Պըլբըլիուի եր-  
կու գաւակներն էին որ ազնուականութեան  
բարձրացան: Պօկտան կրցած ըլլալով հարթել  
Մոլտովայի իշխան Սթուրգայի եւ աւստրիա-  
կան հիւպատոս Լիփիայի միջեւ ստեղծուած  
վէճ մը, որ ծագած էր աւստրիական հպատա-  
կի մը հանդէպ գործ դրուած ոտնձգութենէ մը  
եւ կը սպառնար բարդութեանց յանդիլ, իշ-  
խանը իբր փոխարինութիւն Մկրտիչ Պըլբըլի-  
ուի շնորհեց Քօմիս եւ Յակոբ Պըլբըլիուի Քա-  
միւնար տիտղոսը, 1826 Յունուար 10 թուակիր  
հրովարտակով, որ բացառապէս անոնց կու-  
տար նաեւ տեղացիական իրաւունք: (Կենսա-  
գրութիւն Գր. Պըլբըլիուի, հրատարակուած  
Ռումէն Ակադեմիային կողմէ, 1914, էջ 26):

Ազնուականութեան տիտղոսներ աւելի  
չատ արուեցան յետոյ երբ հայերը վերջնապէս  
տէր դարձան իրենց քաղաքական եւ քաղաքա-  
յին իրաւունքներուն:

1861-ի Մասեաց Աղաւնիի բաժանորդներու  
ցանկին մէջ կը կարդանք անունները շատ մը  
հայերու Եաչէն, Ռումանէն, Պոթոչանէն, Փօք-  
չանէն, Պաքովէն, Էւայլն: Այդ հայերուն մէկ  
մասը նշանակուած են իրենց տիտղոսներով:  
Հին պաշտօններու տիտղոսներ էին ասոնք զորս